

Ստանդարտացման ազգային համակարգ

ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

ՀՏԴ 006.1:006.354

Տ 00

ՄԴ 01.040.01, 01.120

Հանգուցային բառեր. ստանդարտացում, նորմատիվ փաստաթուղթ, ստանդարտ, կանոնակարգ, ստանդարտացման մարմին, տերմին և սահմանում, ստանդարտի տեսակ

Նախաբան

- 1 ՄՇԱԿՎԵԼ ԵՎ ԱՌԱՋԱԴՐՎԵԼ Է Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ կողմից
- 2 ԸՆԴՈՒՆՎԵԼ Է Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ կողմից
- 3 ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է ԴՐՎԵԼ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության (ստանդարտացման ազգային մարմին) 2005 թվականի հուլիսի 8-ի N 144-Ա հրամանով
- 4 ԳՐԱՆՑՎԵԼ Է Հայաստանի Հանրապետության ստանդարտների պետական գրանցամատյանում N 411-2005 առ 14.07.2005 թ.
- 5 Սույն ստանդարտը ներդաշնակ է ԻՍՕ/ԻԵԿ 2: 2004 «Ստանդարտացում և գործունեության հարակից տեսակներ. Ընդհանուր բառարան» (ISO/IEC Guide 2:2004 «Standardization and related activities – General vocabulary») միջազգային ուղեցույցին և ԳՕՍՏ 1.1-2002 «Ստանդարտացման միջպետական համակարգ. Տերմիններ և սահմանումներ» (ГОСТ 1.1-2002 «Межгосударственная система стандартизации. Термины и определения») միջպետական ստանդարտին:
Միջազգային ուղեցույցից առանձին տեխնիկական շեղումների և խմբագրական փոփոխությունների մասին նշված է ներածության մեջ:
- 6 ՀՍՏ 52-97 1-11 բաժինների ՓՈԽԱՐԵՆ

Սույն ստանդարտը չի կարելի լրիվ կամ մասնակիորեն վերարտադրել, բազմացնել և տարածել որպես պաշտոնական հրատարակություն առանց ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության թույլտվության

Բովանդակություն

1 Ստանդարտացում	1
2 Ստանդարտացման նպատակները	4
3 Նորմատիվ փաստաթղթեր	6
4 Ստանդարտների և կանոնակարգերի համար պատասխանատու մարմիններ ...	10
5 Ստանդարտների տեսակները	14
6 Ստանդարտների ներդաշնակումը	17
7 Նորմատիվ փաստաթղթերի բովանդակությունը	19
8 Նորմատիվ փաստաթղթերի կառուցվածքը	21
9 Նորմատիվ փաստաթղթերի մշակումը	22
10 Նորմատիվ փաստաթղթերի կիրառումը	25
11 Կանոնակարգերում ստանդարտների վկայակոչումները	27
Տերմինների այբբենական ցանկ	30
Տերմինների ռուսերեն այբբենական ցանկ	33
Տերմինների անգլերեն այբբենական ցանկ	37
Մատենագիտություն	40

Ներածություն

Սույն ստանդարտով հաստատագրվում են ստանդարտացման բնագավառի հիմնական տերմինները համապատասխան սահմանումներով:

Ստանդարտով հաստատագրված տերմինները կիրառելի են բոլոր տեսակի փաստաթղթերում, գիտատեխնիկական, ուսումնական և տեղեկատու գրականության մեջ, ինչպես նաև ընդունելի միջազգային կապերում՝ փոխըմբռնման հասնելու համար:

Յուրաքանչյուր հասկացության համար հաստատագրված է մեկ ստանդարտացված տերմին: Ստանդարտացված տերմինի հոմանիշ տերմինի կիրառումն ընդունելի չէ:

Սույն ստանդարտով հաստատագրված տերմինները դասավորված են ստանդարտացման ոլորտում հասկացությունների համակարգն արտացոլող դասակարգման հերթականությամբ:

Փակագծերում տրված տերմինի մասը կարող է տերմինի օգտագործման ժամանակ բաց թողնվել:

Ստանդարտացված տերմինները գրված են կիսաթավ տառատեսակով, դրանց կարճ ձևը հապավման տեսքով՝ բաց գույնով:

Սույն ստանդարտի կիրառման ժամանակ դրանով հաստատագրված սահմանումները, անհրաժեշտության դեպքում, կարելի է ձևափոխել՝ մտցնելով կամայական նշաններ, բացահայտելով օգտագործվող տերմինի նշանակությունը և (կամ) նշելով տվյալ հասկացությանը վերաբերող օբյեկտը: Այդ փոփոխությունները չպետք է խախտեն հասկացությունների ծավալը և բովանդակությունը, որոնք հաստատագրված են սույն ստանդարտով:

Ստանդարտում տրված են ստանդարտացված տերմինների օտարալեզու համարժեքները՝ ռուսերեն (ru) և անգլերեն (en) լեզուներով:

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ սույն ստանդարտում տրված են մի շարք լրացուցիչ տերմիններ, ինչպես նաև լրացուցիչ բացատրություններ ծանոթության ձևով, որոնք բացակայում են ԻՍՕ/ԻԷԿ 2:2004 միջազգային ուղեցույցում: Նման տերմինները, դրանց սահմանումները և ծանոթությունները վերցված են ուղղանկյուն շրջանակի մեջ:

ԻՍՕ/ԻԷԿ 2:2004 ուղեցույցի հոդվածներին ներդաշնակ տերմինաբանական հոդվածների նույնականացման հարմարության համար սույն ստանդարտում այդ հոդվածներից աջ փակագծերում տրվում է ԻՍՕ/ԻԷԿ 2:2004 ուղեցույցի համապատասխան հոդվածի համարը և դրանց համապատասխանության աստիճանի պայմանական նշագիրը.

- ՆՆԿ՝ նույնական հասկացություններ,
- ՁՓ՝ ձևափոխված հասկացություններ:

Սույն ստանդարտում արդեն սահմանված տերմինները, որոնք այլ սահմանումներում հանդիպում են առաջին անգամ, տպված են թավ տառերով:

Ստանդարտում տրված են դրանում ընդգրկված հայերեն տերմինների և դրանց ռուսերեն և անգլերեն համարժեքների այբբենական ցանկերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՏԱՆԴԱՐՏ

Ստանդարտացման ազգային համակարգ Տերմիններ և սահմանումներ

Национальная система стандартизации Термины и определения

National system for standardization Terms and definitions

Գործարկման թվականը 15.07.2005

1 Ստանդարտացում

1.1 ստանդարտացում (1.1, ՆՆԿ)

ru стандартизация

en standardization

Իրականում գոյություն ունեցող կամ հնարավոր խնդիրների վերաբերյալ համընդհանուր և բազմակի կիրառման համար **դրույթների** սահմանման միջոցով որոշակի բնագավառում կարգավորվածության լավագույն աստիճանին հասնելուն ուղղված գործունեություն

Ծանոթություններ:

1 Մասնավորապես այդ գործունեությունը դրսևորվում է **ստանդարտների** մշակման, հրատարակման և կիրառման գործընթացներում:

2 Ստանդարտացման գործունեության կարևորագույն արդյունքներն են իրենց գործառական նշանակությանը արտադրանքի, գործընթացի և ծառայության համապատասխանության աստիճանի բարձրացումը, առևտրում խոչընդոտների վերացումը և գիտատեխնիկական համագործակցության նպաստումը:

1.2 ստանդարտացման օբյեկտ (1.2, ՁՓ)

ru объект стандартизации

en subject of standardization

Օբյեկտ, որ պետք է ստանդարտացվի

Ծանոթություններ:

1 Լայն առումով ստանդարտացման օբյեկտ հասկացությունը բնութագրելու համար ընդունված է «արտադրանք, գործընթաց կամ ծառայություն» արտահայտությունը, որը պետք է հասկանալ հավասարապես վերաբերող ցանկացած նյութին, բաղադրիչին, սարքավորմանը, համակարգին, դրանց համատեղելիությանը, արձանագրությանը, ընթացակարգին, գործառույթին, մեթոդին կամ գործունեությանը:

2 **Ստանդարտացումը** կարող է սահմանափակվել ցանկացած օբյեկտի որոշակի ասպեկտներով: Օրինակ՝ կոշիկի նկատմամբ կիրառելի չափսերը և ամրության չափանիշները կարող են ստանդարտացվել առանձին:

3 Ստանդարտացման ասպեկտը ստանդարտով սահմանված դրույթների ընդհանրացրած բովանդակության արտահայտություն է: Ստանդարտացման ասպեկտը ստանդարտի անվանման մեջ նշվում է ենթավերնագրով:

1.3 ստանդարտացման բնագավառ (1.3, ՆՆԿ)

ru область стандартизации
en field of standardization

Ստանդարտացման փոխկապակցված օբյեկտների ամբողջություն

Ծանոթություն: Ստանդարտացման բնագավառ, օրինակ, կարելի է համարել մեքենաշինությունը, տրանսպորտը, գյուղատնտեսությունը, մեծությունները և միավորները:

1.4 տեխնիկայի զարգացման մակարդակ (1.4, ՆՆԿ)

ru уровень развития техники
en state of the art

Արտադրանքի, գործընթացի և ծառայության նկատմամբ ժամանակի տվյալ պահին ձեռք բերված տեխնիկական հնարավորությունների մակարդակ, որը գիտության, տեխնիկայի և գործնական փորձառության ընդհանրացված նվաճումների արդյունքն է

1.5 ճանաչված տեխնիկական կանոն (1.5, ՆՆԿ)

ru признанное техническое правило
en acknowledged rule of technology

Տեխնիկական դրույթ, որը հեղինակավոր մասնագետների մեծամասնության կողմից ճանաչվել է որպես **տեխնիկայի զարգացման մակարդակ**

Ծանոթություն: Տեխնիկայի որևէ ոլորտին վերաբերող **նորմատիվ փաստաթուղթը** հաստատվելու պահից համարվում է ճանաչված տեխնիկական կանոն, եթե այն մշակված է շահագրգիռ կողմերի համագործակցությամբ՝ խորհրդատվական եղանակով և **փոխհամաձայնության** հիման վրա:

1.6 ստանդարտացման մակարդակ (1.6, ՆՆԿ)

ru уровень стандартизации
en level of standardization

Մասնակցության ձև **ստանդարտացման** գործունեության մեջ՝ ըստ աշխարհագրական, քաղաքական կամ տնտեսական հատկանիշի

1.6.1 միջազգային ստանդարտացում (1.6.1, ՆՆԿ)
ru международная стандартизация
en international standardization

Ստանդարտացում, որին մասնակցությունը բաց է բոլոր երկրների համապատասխան **մարմինների** համար

1.6.2 տարածաշրջանային ստանդարտացում (1.6.2, ՆՆԿ)
ru региональная стандартизация
en regional standardization

Ստանդարտացում, որին մասնակցությունը բաց է աշխարհի միայն մեկ աշխարհագրական, քաղաքական կամ տնտեսական շրջանի երկրների համապատասխան **մարմինների** համար

1.6.2.1 միջպետական ստանդարտացում
ru межгосударственная стандартизация
en interstate standardization

Տարածաշրջանային ստանդարտացում, որն իրականացվում է Անկախ Պետությունների Համագործակցության մակարդակով՝ համաձայն ստանդարտացման, չափազիտության, սերտիֆիկացման և հավատարմագրման բնագավառներում գործունեության համաձայնեցված քաղաքականություն վարելու մասին միջկառավարական Համաձայնագրի, իսկ ստանդարտացման ազգային մարմիններն ստեղծել են ստանդարտացման, չափազիտության և սերտիֆիկացման Եվրասիական խորհուրդ (ԵԱՄՍ):

Ծանոթություն: Հետագայում հնարավոր է միջպետական ստանդարտացման մակարդակի ընդարձակումը ըստ աշխարհագրական կամ տնտեսական հատկանիշների՝ նշված Համաձայնագրին պետությունների միանալու և ստանդարտացման ազգային մարմնի ԵԱՄՍ-ի մեջ մտնելու պայմաններով:

1.6.3 ազգային ստանդարտացում (1.6.3, ՆՆԿ)
ru национальная стандартизация
en national standardization

Ստանդարտացում, որն իրականացվում է մեկ որոշակի երկրի մակարդակով

Ծանոթություն: Երկրի ներսում ստանդարտացումը կարող է իրականացվել տնտեսության բնագավառի (օրինակ՝ նախարարության) մակարդակով, կազմակերպության (արդյունաբերական, գիտատեխնիկական, ինժեներական, հասարակական և այլ կազմակերպությունների) մակարդակով:

1.7 փոխհամաձայնություն (1.7, ՆՆԿ)
ru консенсус
en consensus

Ընդհանուր համաձայնություն, որը բնութագրվում է շահագրգիռ կողմերի մեծամասնության կողմից էական հարցերի վերաբերյալ լուրջ առարկությունների

բացակայությամբ, և որը ձեռք է բերվում բոլոր կողմերի կարծիքները հաշվի առնելու և չհամընկնող կարծիքների մերձեցման միջոցով

Ծանոթություն: Փոխհամաձայնությունն անպայմանորեն չի ենթադրում լրիվ միաբանություն:

1.8 ստանդարտացման միջպետական համակարգ
ru межгосударственная система стандартизации
en interstate system for standardization

Կազմակերպամեթոդական միջոցների ամբողջություն, որն ուղղված է միջպետական ստանդարտների մշակմանը և կիրառմանը և որի նպատակն է Համաձայնագրի հիման վրա ստանդարտացման բնագավառում ապահովել համաձայնեցված գործունեություն

Ծանոթություն: Սահմանման մեջ նշված միջոցները հիմնված են համապատասխան համակարգերի մեջ մտնող միջպետական ստանդարտների, ինչպես նաև այդ ստանդարտները լրացնող և կոնկրետացնող միջպետական ստանդարտացման կանոնների և հանձնարարականների վրա:

2 Ստանդարտացման նպատակները

Ծանոթություն: Ստանդարտացման ընդհանուր նպատակները բխում են 1.1 տերմինի սահմանումից: Ստանդարտացումը կարող է ունենալ մեկ կամ մի քանի որոշակի նպատակներ, որոնք ապահովում են արտադրանքի, գործընթացի կամ ծառայության համապատասխանությունն իրենց նշանակությանը: Այդպիսի նպատակներ կարող են լինել (դրանով չսահմանափակվելով) բազմաձևության կառավարումը, կիրառելիությունը, համատեղելիությունը, համափոխարինելիությունը, առողջության պահպանումը, անվտանգության ապահովումը, շրջակա միջավայրի պահպանումը, արտադրանքի պաշտպանությունը, փոխըմբռման ձեռքբերումը, տնտեսական ցուցանիշների բարելավումը, առևտուրը: Որոշ նպատակների իրականացումը կարող է միատեղվել:

2.1 համապատասխանություն նշանակությանը (2.1, ՆՆԿ)

ru соответствие назначению

en fitness for purpose

Նախատեսված պայմաններում արտադրանքի, գործընթացի կամ ծառայության որոշակի գործառույթ կատարելու կարողությունը

2.2 համատեղելիություն (2.2, ՆՆԿ)

ru совместность

en compatibility

Նախատեսված պայմաններում, սահմանված պահանջների կատարման համար արտադրանքի, գործընթացի կամ ծառայության համատեղ օգտագործման պիտանելիությունը՝ առանց անցանկալի փոխազդեցություններ առաջացնելու

2.3 համափոխարինելիություն (2.3, ՆՆԿ)
ru **взаимозаменяемость**
en **interchangeability**

Միևնույն պահանջների կատարման նպատակով որևէ արտադրանքի, գործընթացի կամ ծառայության պիտանելիությունը՝ մեկ այլ արտադրանքի, գործընթացի կամ ծառայության փոխարեն օգտագործելու համար

Ծանոթություն: Գործառնական տեսանկյունով համափոխարինելիությունը կոչվում է «գործառնական համափոխարինելիություն», իսկ չափային տեսանկյունով՝ «չափային (երկրաչափական) համափոխարինելիություն» :

2.4 միասնականացում (բազմաձևության կառավարում) (2.4, ՁՓ)
ru **унификация (управление многообразием)**
en **variety control**

Հիմնական պահանջարկի բավարարման համար անհրաժեշտ արտադրանքի, գործընթացի կամ ծառայության չափերի կամ տեսակների լավագույն թվի ընտրության

Ծանոթություն: Բազմաձևության կառավարումը սովորաբար կապված է բազմաձևության կրճատման հետ:

2.5 անվտանգություն (2.5, ՆՆԿ)
ru **безопасность**
en **safety**

Վնաս հասցնելու հնարավորության հետ կապված անթույլատրելի ռիսկի բացակայություն

Ծանոթություն: Ստանդարտացման բնագավառում արտադրանքի, գործընթացի կամ ծառայության անվտանգությունը սովորաբար դիտարկվում է մի շարք գործոնների, ներառյալ այնպիսի ոչ տեխնիկական գործոնները, ինչպես՝ մարդու վարքը լավագույն հավասարակշռության հասնելու նպատակով, որը թույլ է տալիս մարդու առողջությանը և գույքին վնաս հասցնելու հնարավորության հետ կապված ռիսկը հասցնել թույլատրելի աստիճանի:

2.6 շրջակա միջավայրի պահպանում (2.6, ՆՆԿ)
ru **охрана окружающей среды**
en **protection of the environment**

Արտադրանքի, գործընթացի կամ ծառայության անբարենպաստ ազդեցությունից շրջակա միջավայրի պաշտպանություն

2.7 արտադրանքի պաշտպանություն (2.7, ՆՆԿ)
ru **защита продукции**
en **product protection**

Արտադրանքի պահպանումը կլիմայական կամ այլ անբարենպաստ պայմաններից՝ օգտագործման, փոխադրման կամ պահման ժամանակ

3 Նորմատիվ փաստաթղթեր

3.1 նորմատիվ փաստաթուղթ (3.1, ՆՆԿ)
ru нормативный документ
en normative document

Փաստաթուղթ, որով սահմանվում են կանոններ, ընդհանուր սկզբունքներ կամ բնութագրեր տարբեր տեսակի գործունեության կամ դրանց արդյունքների վերաբերյալ

Ծանոթություններ:

1 «Նորմատիվ փաստաթուղթ» տերմինը սեռային է, որն ընդգրկում է այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ ստանդարտներ, տեխնիկական պայմաններ, կանոնների ժողովածուներ և կանոնակարգեր:

2 «Փաստաթուղթ» ասելով պետք է հասկանալ ցանկացած կրիչ, որի մեջ կամ որի վրա գրառված է տեղեկատվություն:

3 Նորմատիվ փաստաթղթերի տարբեր տեսակները վերաբերող տերմինները սահմանվում են հաշվի առնելով, որ փաստաթուղթը և դրա բովանդակությունը դիտվում են որպես մեկ ամբողջություն:

3.2 ստանդարտ (3.2 ՆՆԿ)
ru стандарт
en standard

Իրավասու մարմնի կողմից ընդունված փաստաթուղթ, որով սահմանվում են համընդհանուր և բազմակի կիրառման համար կանոններ, ցուցումներ կամ արտադրանքի բնութագրեր կամ արտադրանքի հետ կապված արտադրման գործընթացներ և մեթոդներ, որոնց համապատասխանությունը պարտադիր չէ: Այն կարող է ընդգրկել նաև տերմինաբանությանը, փաթեթավորմանը, պայմանանշաններին, արտադրանքի մակնշմանը կամ պիտակավորմանը ներկայացվող պահանջներ:

Փաստաթուղթ՝ մշակված **փոխհամաձայնության** հիման վրա, հաստատված ճանաչված **մարմնի** կողմից, որով սահմանվում են գործունեության տարբեր ձևերին կամ դրանց արդյունքներին վերաբերող համընդհանուր և բազմակի օգտագործման կանոններ, ընդհանուր սկզբունքներ կամ բնութագրեր և որն ուղղված է որոշակի բնագավառում լավագույն կարգավորվածության ձեռքբերմանը

Ծանոթություն: Ստանդարտները պետք է հիմնված լինեն գիտության, տեխնիկայի և գործնական փորձառության ընդհանրացված արդյունքների վրա և ուղղված լինեն հասարակության համար լավագույն օգտակարության ձեռքբերմանը:

* Սահմանված է ըստ «Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

3.2.1 հանրամատչելի ստանդարտներ

(3.2.1, ՆՆԿ)

Ծանոթություն: Իրենց կարգավիճակով, սպառողների լայն շրջանի համար մատչելիությամբ և տեխնիկայի զարգացման մակարդակին համապատասխանելու համար անհրաժեշտ պարբերական փոփոխություններով կամ վերանայումներով միջազգային, տարածաշրջանային և ազգային ստանդարտները պետք է իրենցից ներկայացնեն ճանաչված տեխնիկական կանոններ

3.2.1.1 միջազգային ստանդարտ

(3.2.1.1, ՆՆԿ)

ru международный стандарт
en international standard

Ստանդարտ, որն ընդունված է ստանդարտացումով զբաղվող ստանդարտացման միջազգային կազմակերպության կողմից և մատչելի է սպառողների լայն շրջանի համար

Ծանոթություններ:

1 Միջազգային ստանդարտներն են. ԻՍՕ (ISO) և ԻԷԿ (IEC) դասիչներով ստանդարտներն ու ԻՍՕ/ԻԷԿ (ISO/IEC) դասիչով ստանդարտները, որոնք ԻՍՕ-ի և ԻԷԿ-ի համատեղ հրապարակումներն են:

2 Միջազգային ստանդարտացման մեջ ստանդարտների հետ մեկտեղ կիրառվում են նաև ԻՍՕ (ISO Guide), ԻՍՕ/ԻԷԿ (ISO/IEC Guide) ուղղեցույցները, ԻՍՕ-ի տեխնիկական հաշվետվությունները՝ ԻՍՕ/ՏՌ (ISO/TR) դասիչով, միջազգային ստանդարտացված տրամատները՝ ԻՍՕ/ԻԷԿ ԻՍՊ (ISO/IEC ISP) դասիչով, տեխնոլոգիական ուղղությունների գնահատումները՝ ԻՍՕ/ՏՏՍ (ISO/TTA) դասիչով, ԻՍՕ-ի հանձնարարականները՝ ԻՍՕ/Ռ (ISO/R) դասիչով, ԻՍՕ-ի տեխնիկական պայմանները՝ ԻՍՕ/ՏՍ (ISO/TS) դասիչով, ԻՍՕ-ի հանրամատչելի տեխնիկական պայմանները՝ ԻՍՕ/ՊԱՍ (ISO/PAS) դասիչով, ճյուղային տեխնիկական համաձայնագիրը՝ ԻՍՕ/ԻՏՍ (ISO/ITA) դասիչով:

3.2.1.2 տարածաշրջանային ստանդարտ

(3.2.1.2, ՆՆԿ)

ru региональный стандарт
en regional standard

Ստանդարտ, որն ընդունված է ստանդարտացումով զբաղվող ստանդարտացման տարածաշրջանային մարմնի կողմից և մատչելի է սպառողների լայն շրջանի համար

Ծանոթություն: Տարածաշրջանային ստանդարտների օրինակ են ԵՆ (EN) դասիչով եվրոպական ստանդարտները:

3.2.1.2.1 միջպետական ստանդարտ
ru **межгосударственный стандарт**
en **interstate standard**

Տարածաշրջանային ստանդարտ, որն ընդունված է ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման Եվրասիական խորհրդի կողմից և մատչելի է սպառողների լայն շրջանի համար

3.2.1.3 ազգային ստանդարտ (3.2.1.3, ՆՆԿ)

ru **национальный стандарт**
en **national standard**

Ստանդարտ, որն ընդունված է **ստանդարտացման ազգային մարմնի** կողմից և մատչելի է սպառողների լայն շրջանի համար

Ծանոթություն: Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ազգային ստանդարտներն ընդունվում են ստանդարտների ազգային ինստիտուտի կողմից, հաստատվում և գործողության մեջ են դրվում ստանդարտացման ազգային մարմնի կողմից:

3.2.1.4 ստանդարտների համալիր

ru **комплекс стандартов**
en **standards complex**

Փոխկապակցված **ստանդարտների** ամբողջություն, որոնք միավորված են ընդհանուր նպատակային ուղղվածությամբ և (կամ) սահմանում են համաձայնեցված պահանջներ՝ փոխկապակցված **ստանդարտացման օբյեկտների** նկատմամբ

3.2.1.5 միջպետական ստանդարտացման կանոններ

ru **правила по межгосударственной стандартизации**
en **interstate standardization rules**

Նորմատիվ փաստաթուղթ, որն ընդունված է ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման Եվրասիական խորհրդի կողմից և որով սահմանվում են պարտադիր կիրառման համար կազմակերպամեթոդական դրույթներ, որոնք լրացնում կամ որոշակիացնում են հիմնադրական միջպետական ստանդարտներով սահմանված առանձին դրույթները կամ կանոնակարգում են ստանդարտացման, չափագիտության, համապատասխանության գնահատման կամ հավատարմագրման աշխատանքներում ստանդարտացման ազգային մարմինների փոխգործունեությունը

3.2.1.6 միջպետական ստանդարտացման հանձնարարականներ

ru **рекомендации по межгосударственной стандартизации**
en **interstate standardization recommendations**

Նորմատիվ փաստաթուղթ, որն ընդունված է ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման Եվրասիական խորհրդի կողմից և որը պարունակում է ինքնուրույն օգտագործման համար կազմակերպամեթոդական դրույթներ, որոնք վերաբերում են ստանդարտացման, չափագիտության, համապատասխանության գնահատման և հավատարմագրման աշխատանք-

ների կատարմանը և որոնք նպատակահարմար է գործնականում նախապես ստուգել՝ մինչև միջպետական ստանդարտով կամ համապատասխան կանոններով դրանց սահմանելը

3.2.2 Այլ ստանդարտներ (3.2.2, ՆՆԿ)

Ծանոթություն: Ստանդարտները կարող են նաև ընդունվել այլ մակարդակներով, օրինակ, կազմակերպության ստանդարտներ: Նման ստանդարտների գործողությունը կարող է տարածվել մի քանի կազմակերպությունների վրա:

3.3 նախնական ստանդարտ (3.3, ՆՆԿ)
 ru **предварительный стандарт**
 en **prestandard**

Փաստաթուղթ, որը ժամանակավորապես ընդունվել է **ստանդարտացումով զբաղվող մարմնի** կողմից և հասցվել է սպառողների լայն շրջանին՝ դրա կիրառման գործընթացում անհրաժեշտ փորձ ձեռք բերելու նպատակով և որի վրա պետք է հիմնվի **ստանդարտը**

3.4 տեխնիկական պայմաններ (3.4, ՆՆԿ)
 ru **документ технических условий**
 en **technical specification**

Փաստաթուղթ, որով սահմանվում են տեխնիկական **պահանջներ**, որոնց պետք է համապատասխանի որոշակի արտադրանքը, գործընթացը կամ ծառայությունը

Ծանոթություններ:

1 Տեխնիկական պայմաններում, անհրաժեշտության դեպքում, պետք է նշվեն այն ընթացակարգերը, որոնց օգնությամբ կարելի է որոշել պահպանված են արդյոք սահմանված պահանջները:

*2 Տեխնիկական պայմանները կարող է լինել **ստանդարտ**, ստանդարտի մաս կամ ինքնուրույն փաստաթուղթ:*

3.5 կանոնների հավաքածու (3.5, ՆՆԿ)
 ru **свод правил**
 en **code of practice**

Փաստաթուղթ, որով հանձնարարվում են սարքավորումների, կառուցվածքների, արտադրանքի նախագծման, պատրաստման, տեղակայման, տեխնիկական սպասարկման կամ շահագործման տեխնիկական կանոններ կամ ընթացակարգեր

*Ծանոթություն: Կանոնների հավաքածուն կարող է լինել **ստանդարտ**, ստանդարտի մաս կամ ինքնուրույն փաստաթուղթ:*

3.6 կանոնակարգ (3.6, ՆՆԿ)
ru регламент
en regulation

Փաստաթուղթ, որը պարունակում է իրավական նորմեր և ընդունված է իշխանության մարմնի կողմից

3.6.1 տեխնիկական կանոնակարգ (3.6.1, ՆՆԿ)
ru технический регламент
en technical regulation

Փաստաթուղթ, որով սահմանվում են արտադրանքի (ծառայության) կամ դրա հետ կապված արտադրման (կատարման) գործընթացների և մեթոդների վերաբերյալ տեխնիկական բնութագրեր: Այն կարող է ընդգրկել նաև տերմինաբանությանը, փաթեթավորմանը, պայմանանշաններին, արտադրանքի մակնշմանը կամ պիտակավորմանը ներկայացվող պահանջներ: Տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջները պարտադիր են:

Կանոնակարգ, որը պարունակում է տեխնիկական **պահանջներ** կամ անմիջականորեն կամ ստանդարտների, տեխնիկական պայմանների կամ **կանոնների հավաքածուի** վկայակոչմամբ, կամ այդ փաստաթղթերի բովանդակությունն իր մեջ ներառնելու միջոցով

Ծանոթություն: Տեխնիկական կանոնակարգը կարող է լրացվել կանոնակարգի պահանջներին համապատասխանության հասնելու որոշ եղանակների վերաբերյալ տեխնիկական ցուցումներով, այսինքն մեթոդական դրույթներով (դրույթներ՝ ուղղված համապատասխանության հասնելուն):

3.7 տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգիչ
ru классификатор технико-экономической и социальной информации
en technique-economical and social information classifier

Փաստաթուղթ, որով սահմանվում են դասակարգման օբյեկտների և դրանց ենթաբազմության կոդերի ու անվանումների հավաքածուները և որը պարտադիր է կիրառման պետական տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական շտեմարանների ստեղծման ու միջգերատեսչական տեղեկատվության փոխանակման ժամանակ

* Սահմանված է ըստ «Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

4 Ստանդարտների և կանոնակարգերի համար պատասխանատու մարմիններ

4.1 մարմին (4.1, ՆՆԿ)
ru орган
en body

Իրավաբանական կամ վարչական միավոր, որն ունի որոշակի խնդիրներ և կառուցվածք

Ծանոթություն: Մարմնի օրինակներ են կազմակերպությունները, իշխանության մարմինները, ֆիրմաները, հիմնարկությունները:

4.2 կազմակերպություն (4.2, ՆՆԿ)
ru организация
en organization

Մարմին, որը հիմնված է այլ մարմինների կամ անհատների անդամության վրա

4.3 ստանդարտացումով զբաղվող մարմին (4.3, ՆՆԿ)
ru орган, занимающийся стандартизацией
en standardizing body

Մարմին, որի գործունեությունը ստանդարտացման բնագավառում հանրաճանաչ է

4.3.1 ստանդարտացումով զբաղվող տարածաշրջանային կազմակերպություն (4.3.1, ՆՆԿ)
ru региональная организация, занимающаяся стандартизацией
en regional standardizing organization

Ստանդարտացումով զբաղվող կազմակերպություն, որին անդամակցելու իրավունք ունի միայն մեկ աշխարհագրական, քաղաքական կամ տնտեսական շրջանի յուրաքանչյուր երկրի համապատասխան ազգային **մարմինը**

Ծանոթություն: Ստանդարտացման տարածաշրջանային կազմակերպությունների օրինակներ են. ՄԵՆ՝ Ստանդարտացման Եվրոպական կոմիտե, (СЕН, Европейский комитет по стандартизации. CEN, European Committee for Standardization) և ՄԵՆԷԼԵԿ՝ Էլեկտրատեխնիկայում ստանդարտացման Եվրոպական կոմիտե, (СЕНЭЛЕК, Европейский комитет по стандартизации в электротехнике. CENELEC, European Committee for Electrotechnical Standardization):

4.3.2 ստանդարտացումով զբաղվող միջազգային կազմակերպություն (4.3.2, ՆՆԿ)
ru международная организация, занимающаяся стандартизацией
en international standardizing organization

Ստանդարտացումով զբաղվող կազմակերպություն, որին անդամակցելու իրավունք ունի յուրաքանչյուր երկրի համապատասխան ազգային **մարմինը**

Ծանոթություն: Ստանդարտացման միջազգային կազմակերպություններ են. ԻՍՕ՝ Ստանդարտացման միջազգային կազմակերպություն), (ISO, Международная организация по стандартизации. ISO, the International Organization for Standardization), ԻԷԿ՝ Միջազգային էլեկտրատեխնիկական հանձնաժողով, (МЭК, Международная электротехническая комиссия. IEC, International Electrotechnical Commission), որոնք կազմում են համաշխարհային ստանդարտացման մասնագիտացված համակարգ:

4.4 ստանդարտացման մարմին (4.4, ՆՆԿ)
ru орган по стандартизации
en standards body

Ազգային, տարածաշրջանային կամ միջազգային մակարդակներով ճանաչված **ստանդարտացումով զբաղվող մարմին**, որի հիմնական գործառույթը, համաձայն իր կարգավիճակի, սպառողների լայն շրջանին մատչելի **ստանդարտների** մշակումը, հաստատումը կամ ընդունումն է

Ծանոթություն: Ստանդարտացման մարմինը կարող է ունենալ այլ հիմնական գործառույթ ևս:

4.4.1 ստանդարտացման ազգային մարմին (4.4.1 ՆՆԿ)
ru национальный орган по стандартизации
en national standards body

Ստանդարտացման բնագավառում կառավարության կողմից լիազորված պետական կառավարումն իրականացնող մարմին *

Ազգային մակարդակով ճանաչված **ստանդարտացման մարմին**, որն իրավունք ունի լինելու համապատասխան **միջազգային** կամ **տարածաշրջանային ստանդարտացման կազմակերպության** ազգային անդամ

4.4.2 ստանդարտացման տարածաշրջանային կազմակերպություն (4.4.2, ՆՆԿ)
ru региональная организация по стандартизации
en regional standards organization

Ստանդարտացման կազմակերպություն, որին անդամակցելու իրավունք ունի միայն մեկ աշխարհագրական, քաղաքական կամ տնտեսական շրջանի յուրաքանչյուր երկրի համապատասխան ազգային **մարմինը**

* Սահմանված է ըստ «Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

4.4.3 ստանդարտացման միջազգային կազմակերպություն (4.4.3, ՆՆԿ)

ru международная организация по стандартизации
en international standards organization

Ստանդարտացման կազմակերպություն, որին անդամակցելու իրավունք ունի յուրաքանչյուր երկրի համապատասխան ազգային մարմինը

4.4.3.1 ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման Եվրասիական խորհուրդ, ԵԱՍՍ

ru Евразийский совет по стандартизации, метрологии и сертификации, EACC
en Euro-Azian Council for Standardization, Metrology and Certification, EASC

Ստանդարտացման տարածաշրջանային կազմակերպություն, որի անդամներ են այն պետությունների ստանդարտացման ազգային մարմինները, որոնք մտնում են Անկախ Պետությունների Համագործակցության մեջ և որին կարող են միանալ այլ պետությունների ստանդարտացման ազգային մարմիններ՝ այն դեպքում, եթե դրանք միացել են ստանդարտացման, չափագիտության, սերտիֆիկացման և հավատարմագրման բնագավառում համաձայնեցված քաղաքականություն վարելու մասին միջկառավարական Համաձայնագրին, ինչպես նաև համապատասխան միջպետական ստանդարտներով սահմանված հիմնական նպատակների, սկզբունքների և ստանդարտացման, չափագիտության, սերտիֆիկացման և հավատարմագրման բնագավառներում աշխատանքների կատարման կարգի ճանաչման դեպքում

4.4.3.2 ստանդարտացման տեխնիկական հանձնաժողով

ru технический комитет по стандартизации
en technical committee

Շահագրգիռ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական անձանց, գիտատեխնիկական, ճարտարագիտական, հասարակական և այլ կազմակերպությունների ներկայացուցիչների միություններ, որոնք ստեղծված են կամավոր հիմունքներով ազգային, միջպետական, միջազգային և տարածաշրջանային ստանդարտների մշակման, ինչպես նաև, ըստ ստանդարտացման կցված օբյեկտների կամ գործունեության ոլորտների, ազգային, միջպետական, միջազգային և տարածաշրջանային ստանդարտացման բնագավառներում նախապատրաստական և լրացուցիչ աշխատանքների կատարման համար

<p>4.4.3.3 ստանդարտացման միջպետական տեխնիկական հանձնաժողով ru межгосударственный технический комитет по стандартизации en interstate technical committee</p> <p>Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման Եվրասիական խորհրդի աշխատանքային մարմին, որը ստեղծված է միջպետական ստանդարտների մշակման համար, ինչպես նաև, ըստ ստանդարտացման կցված օբյեկտի կամ գործունեության ոլորտի, միջպետական և տարածաշրջանային ստանդարտացման նախապատրաստական և այլ լրացուցիչ աշխատանքներ կատարելու համար</p>
<p>4.4.3.4 ստարդարտացման միջազգային կազմակերպության տեխնիկական հանձնաժողով ru технический комитет международной организации по стандартизации en internation technical committee</p> <p>Ստանդարտացման միջազգային կազմակերպության աշխատանքային մարմին, որն ստեղծված է իրեն կցված գործունեության ոլորտներում միջազգային ստանդարտների մշակման համար</p>

4.5 իշխանության մարմին (4.5, ՆՆԿ)
ru орган власти
en authority

Մարմին, որն ունի օրենքով սահմանված լիազորություններ և իրավունքներ
Ծանոթություն: Իշխանության մարմինը կարող է լինել տարածաշրջանային, ազգային կամ տեղական:

4.5.1 կանոնակարգող իշխանության մարմին (4.5.1, ՆՆԿ)
ru регламентирующий орган власти
en regulatory authority

Իշխանության մարմին, որը պատասխանատու է **կանոնակարգերի** մշակման կամ ընդունման համար

4.5.2 կանոնակարգերի գործադիր մարմին (4.5.2, ՆՆԿ)
ru исполнительный орган по регламентам
en enforcement authority

Իշխանության մարմին, որը պատասխանատու է **կանոնակարգերի** կատարումն ապահովելու համար

Ծանոթություն: Կանոնակարգերի գործադիր մարմինը երբեմն կարող է կատարել նաև **կանոնակարգող իշխանության մարմնի** գործառույթները:

5 Ստանդարտների տեսակները

Ծանոթություն: Հետևյալ տերմիններն ու սահմանումները չեն հավակնում ներկայացնել **ստանդարտների** հնարավոր տեսակների համակարգված դասակար-

գում կամ սպառիչ ցանկ: Նշվում են միայն դրանց որոշ ընդհանուր տեսակները, որոնք փոխբացատրող չեն: Օրինակ՝ որոշ դեպքերում **արտադրանքի ստանդարտը** կարող է դիտվել նաև որպես **փորձարկման մեթոդների ստանդարտ**, եթե դրանում նկարագրվում են տվյալ արտադրանքի բնութագրերի որոշման **փորձարկման մեթոդները**:

<p>5.1 ստանդարտի տեսակ ru вид стандарта en type of standard</p> <p>Ստանդարտի բնութագիր, որը որոշվում է իր բովանդակությամբ՝ կախված ստանդարտացման օբյեկտից</p>

5.2 հիմնադրական ստանդարտ (5.1, ՁՓ)
ru основополагающий стандарт
en basic standard

Ստանդարտ, որն ունի տարածման լայն ոլորտ, կամ պարունակում է որոշակի բնագավառի համար ընդհանուր **դրույթներ**
Շանդություններ:

<p><i>1 Հիմնադրական ստանդարտներով սահմանվում են գործունեության որոշակի ոլորտի և (կամ) հանրընդհանուր տեխնիկական պահանջների և կանոնների համար ընդհանուր կազմակերպամեթոդական դրույթներ, որոնք ապահովում են արտադրանքի մշակման և օգտագործման գործընթացներում փոխըմբռնումը, տեխնիկական միասնականությունը և գիտության, տեխնիկայի ու արտադրության տարբեր ոլորտների փոխկապակցությունը, շրջակա միջավայրի պահպանումը, արտադրանքի գործընթացների և ծառայությունների անվտանգությունը մարդու կյանքի և առողջության, ֆիզիկական, իրավաբանական անձանց, գույքի, պետության համար և (կամ) այլ ընդհանուր տեխնիկական պահանջներ:</i></p>
--

2 Հիմնադրական ստանդարտը կարող է կիրառվել անմիջականորեն որպես ստանդարտ, կամ հիմք ծառայել այլ ստանդարտների համար:

5.3 տերմինաբանական ստանդարտ (5.2, ՆՆԿ)
ru терминологический стандарт
en terminology standard

Ստանդարտ, որը տարածվում է տերմինների վրա, որոնց, որպես կանոն, տրվում են սահմանումներ, իսկ որոշ դեպքերում՝ ծանոթություններ, պարզաբանումներ, օրինակներ և այլն:

5.4 փորձարկման մեթոդների ստանդարտ (5.3, ՆՆԿ)
ru стандарт методов испытаний
en testing standard

Ստանդարտ, որով սահմանվում են **փորձարկման մեթոդներ**, որը երբեմն լրացվում է **փորձարկումներին** վերաբերող այլ **դրույթներով**, ինչպես օրինակ՝ նմուշառումը, վիճակագրական մեթոդների օգտագործումը և փորձարկումների կատարման կարգը

5.5 արտադրանքի ստանդարտ (5.4, ՆՆԿ)
ru стандарт на продукцию
en product standard

Ստանդարտ, որով սահմանվում են **պահանջներ**, որոնց պետք է բավարարի արտադրանքը կամ արտադրանքի խումբը, որպեսզի ապահովվի արտադրանքի **համապատասխանությունն** իր **նշանակությանը**

Ծանոթություններ:

1 Արտադրանքի ստանդարտը, նշանակությանը համապատասխանության պահանջից բացի, անմիջականորեն կամ վկայակոչման ձևով կարող է ներառել այնպիսի ասպեկտներ, ինչպիսիք են տերմինները և սահմանումները, նմուշառումը, փորձարկումները, փաթեթավորումը և մակնշումը, իսկ երբեմն էլ՝ տեխնոլոգիական պահանջները:

2 Արտադրանքի ստանդարտը կարող է լինել լրիվ և ոչ լրիվ՝ կախված նրանից, թե դրանով սահմանվում են բոլոր անհրաժեշտ պահանջները, թե դրանց մի մասը: Այդ առումով տարբերում են չափերի ստանդարտներ, նյութերի ստանդարտներ և առաքման կանոնների ստանդարտներ:

5.6 գործընթացի ստանդարտ (5.5, ՆՆԿ)
ru стандарт на процесс
en process standard

Ստանդարտ, որով սահմանվում են **պահանջներ**, որոնց պետք է բավարարի գործընթացը, որպեսզի ապահովվի գործընթացի համապատասխանությունն իր **նշանակմանը**

5.7 ծառայության ստանդարտ (5.6, ՆՆԿ)
ru стандарт на услугу
en service standard

Ստանդարտ, որով սահմանվում են **պահանջներ**, որոնց պետք է բավարարի ծառայությունը, որպեսզի ապահովվի ծառայության համապատասխանությունն իր **նշանակմանը**

Ծանոթություն: Ծառայության ստանդարտներ կարող են մշակվել այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ սպիտակեղենի լվացումը, հյուրանոցային տնտեսությունը, տրանսպորտը, ավտոսպասարկումը, հեռուստակապը, ապահովագրությունը, բանկային գործը, առևտուրը և այլն:

- 5.8 համատեղելիության ստանդարտ** (5.7, ՆՆԿ)
ru стандарт на совместимость
en interface standard

Ստանդարտ, որով սահմանվում են **պահանջներ**, որոնք վերաբերում են արտադրանքի կամ համակարգերի միակցման տեղերում դրանց համատեղելիությանը:

- 5.9 բաց տվյալներով ստանդարտ** (5.8, ՆՆԿ)
ru стандарт с открытыми значениями
неидентифицирующий стандарт
en standard on data to be provided

Ստանդարտ, որը պարունակում է այնպիսի բնութագրերի անվանացանկ, որոնց արժեքները կամ այլ տվյալները պետք է նշվեն արտադրանքի, գործընթացի կամ ծառայության որոշակիացման համար

Ծանոթություն: Որոշ ստանդարտներում նախատեսվում են մատակարարների կողմից նշված տվյալներ, այլ ստանդարտներում՝ գնորդների կողմից նշված տվյալներ:

6 Ստանդարտների ներդաշնակեցումը

*Ծանոթություն: **Տեխնիկական կանոնակարգերը** կարող են ներդաշնակեցված լինել **ստանդարտների** նման: Համապատասխան տերմինները և սահմանումները կարելի է ստանալ՝ 6.1 – 6.9 սահմանումներում «ստանդարտ» տերմինը փոխարինելով «տեխնիկական կանոնակարգ» տերմինով և 6.1 սահմանումում «**ստանդարտացումով զբաղվող մարմին**» տերմինը՝ «**իշխանության մարմին**» տերմինով:*

- 6.1 ներդաշնակեցված ստանդարտներ** (6.1, ՆՆԿ)
 համարժեք ստանդարտներ
ru гармонизированные стандарты
 эквивалентные стандарты
en harmonized standards
 equivalent standards

Միննույն **օբյեկտին** վերաբերող և **ստանդարտացումով զբաղվող** տարբեր **մարմինների** կողմից հաստատված **ստանդարտներ**, որոնք ապահովում են արտադրանքի, գործընթացի և ծառայության **համափոխարինելիությունը** և այդ ստանդարտներին համապատասխան ներկայացված փորձարկման արդյունքների կամ տեղեկատվության փոխընթացումը

*Ծանոթություն: Ներդաշնակեցված ստանդարտները կարող են ունենալ ներկայացման ձևի կամ նույնիսկ բովանդակության տարբերություններ, օրինակ՝ պարզաբանող ծանոթություններում, ստանդարտի **պահանջների** կատարման ցուցումներում այս կամ այն այլընտրանքների և տարատեսակների նախապատվության հարցերում:*

6.2 միասնականացված ստանդարտներ (6.2, ՆՆԿ)
en унифицированные стандарты
ru unified standards

Ներդաշնակեցված ստանդարտներ, որոնք նույնական են բովանդակությամբ, սակայն նույնական չեն ներկայացման ձևով

6.3 նույնական ստանդարտներ (6.3, ՆՆԿ)
ru идентичные стандарты
en identical standards

Ներդաշնակեցված ստանդարտներ, որոնք նույնական են բովանդակությամբ և ներկայացման ձևով

Ծանոթություններ:

1 Նույնական ստանդարտների նշանագրերը կարող են լինել տարբեր:

2 Տարբեր լեզուներով նման ստանդարտները ներկայացնում են ճշգրիտ թարգմանություններ:

6.4 միջազգային մակարդակով ներդաշնակեցված ստանդարտներ (6.4, ՆՆԿ)
ru стандарты, гармонизированные на международном уровне
en internationally harmonized standards

Ստանդարտներ` ներդաշնակեցված միջազգային ստանդարտի հետ

6.5 տարածաշրջանային մակարդակով ներդաշնակեցված ստանդարտներ (6.5, ՆՆԿ)
ru стандарты, гармонизированные на региональном уровне
